



ԵՐԵՎԱՆ, 2026

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ



«ԳԼՈՒԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԱՋԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.**

## Բովանդակություն

---

Անկախ աուդիտորական եզրակացություն .....	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն .....	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն .....	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն .....	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն .....	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ .....	10



## «ԳԼՈՒԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0070, Արշակունյաց 192/5; հեռ.՝ (374 95) 48 00 47;  
auditglobaudit@mail.ru; www.globaudit.am

### ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ-ի բաժնեպատերերին

#### **Վերապահումով Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով Կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հանգամանքի հնարավոր ազդեցության՝ կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՖՀՄՍ-ների):

#### **Վերապահումով Կարծիքի հիմքեր**

Ընկերությունը ակտիվներին վերաբերող շնորհները հաշվառելիս ՀՀՄՍ 20 ստանդարտի 2 կետի գ ենթակետի համաձայն կիրառում է շնորհների հաշվառման ՀՀՄՍ 20 ստանդարտից տարբերվող մոտեցում՝ ակտիվներին վերաբերող շնորհները ամբողջությամբ ճանաչվում է որպես եկամուտ և ծախս այդ ակտիվների ստացման պայմանի ամբողջական կատարման պահից, որի արդյունքում շնորհի շրջանակում ձեռք բերված հիմնական միջոցների մնացորդային արժեքը ֆինանսական հաշվետվություններում թերազնահատված է 500,491 հազար դրամի չափով:

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

## **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձնիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններին օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք հայտանաբերվել են իրականացված աուդիտի ընթացքում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը նաև այն մասին, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով՝ կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համապատասխան երաշխիքները, որտեղ որ կարելի է:

Ղեկավարության հետ քննարկված բոլոր դիտարկումներից ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀՄՀ): Այդ խնդիրները ներկայացվել են աուդիտորական եզրակացությունում, եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելվում հրապարակայնորեն դրանց բացահայտումը կամ, հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասներն ավելի մեծ կարող են լինել:

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ



Տնօրեն Դ. Հարությունյան FCCA



Աուդիտոր S. Սարգսյան

2026թ. մայիսի 5-ին  
ք. Երևան

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ըստ գործառույթի)

Հազար դրամ		2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնթ.		
Իրացումից հասույթ	4	1,322,682	1,155,246
Իրացման ինքնարժեք	5	(1,380,712)	(754,249)
<b>Համախառն շահույթ</b>		<b>(58,030)</b>	<b>400,997</b>
Գործառնական այլ եկամուտներ	8	11,399	24,043
Իրացման ծախսեր		-	-
Վարչական ծախսեր	6	(359,024)	(361,027)
Այլ գործառնական ծախսեր	7	(34,361)	(3,377)
<b>Գործառնական գործունեությունից շահույթ</b>		<b>(440,016)</b>	<b>60,636</b>
Ֆինանսական եկամուտ/ծախս	9	31,425	20,303
Այլ ոչ գործառնական շահույթ/վնաս	10	658,177	102,722
<b>Շահույթ/(վնաս) մինչև հարկերը</b>		<b>249,586</b>	<b>183,661</b>
Շահութահարկի գծով ծախս	11	(49,289)	(39,873)
<b>Տարվա շահույթ/(վնաս)</b>		<b>200,297</b>	<b>143,788</b>
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		<b>200,297</b>	<b>143,788</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. մայիսի 5-ին

Տնօրենի պաշտոնակատար՝

Փորձագետ Հաշվապահ՝



Հայկ Զեյնալյան

Մարիամ Ծիրունյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնթ.		
<b>Ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	12	1,095,113	1,159,960
Ոչ նյութական ակտիվներ	13	36,291	40,393
Այլ երկարաժամկետ ակտիվներ		-	6,420
Հետաձգված հարկային ակտիվներ	19	5,854	-
		<b>1,137,258</b>	<b>1,206,773</b>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	14	26,515	19,058
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	96,108	107,572
Տրված փոխառություններ	16	32,000	49,000
Դրամական միջոցներ և համարժեքներ	17	1,086,036	1,172,053
Այլ ընթացիկ ակտիվներ		17,948	2,492
		<b>1,258,607</b>	<b>1,350,175</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>2,395,865</b>	<b>2,556,948</b>
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	18	244,749	244,749
Էմիսիոն եկամուտ		(53,802)	(53,802)
Վերագնահատումից արժեքի աճ		87,890	87,890
Կուտակված շահույթ		483,125	373,651
Սեփական կապիտալի այլ տարրեր		36,712	36,712
		<b>798,674</b>	<b>689,200</b>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաավորող շնորհներ	20	1,372,624	1,766,878
		<b>1,372,624</b>	<b>1,766,878</b>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	163,656	79,307
Պահուստներ	22	32,522	-
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		28,389	19,208
		<b>224,567</b>	<b>100,870</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>1,597,191</b>	<b>1,867,748</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>2,395,865</b>	<b>2,556,948</b>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատումից արժեքի աճ	Սեփական կապիտալ այլ տարեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
<b>2024թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>244,749</b>	<b>(53,802)</b>	<b>87,890</b>	<b>36,712</b>	<b>306,605</b>	<b>622,154</b>
Տարվա շահույթ	-	-	-	-	143,788	143,788
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	-	-
Շահաբաժիններ	-	-	-	-	(76,742)	(76,742)
Գործարքներ սեփական կապիտալի հետ	-	-	-	-	-	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>244,749</b>	<b>(53,802)</b>	<b>87,890</b>	<b>36,712</b>	<b>373,651</b>	<b>689,200</b>
Տարվա շահույթ	-	-	-	-	200,297	200,297
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	-	-
Շահաբաժիններ	-	-	-	-	(90,823)	(90,823)
Գործարքներ սեփական կապիտալի հետ	-	-	-	-	-	-
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>244,749</b>	<b>(53,802)</b>	<b>87,890</b>	<b>36,712</b>	<b>483,125</b>	<b>798,674</b>

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	1,574,463	1,392,187
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	9,613	19,600
Նյութերի, ապրանքների ձեռքբերում	(48,729)	(38,712)
Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում	(113,992)	(107,302)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(673,712)	(793,926)
Վճարումներ բյուջե	(493,970)	(252,928)
Վճարումներ պարտադիր սոցիալական վճարների գծով	(26,696)	-
Այլ մուտքեր	737	-
Այլ ելքեր	(87,186)	(39,590)
<b>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>	<b>140,528</b>	<b>179,329</b>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Դրամաշնորհ	381,892	676,119
Ստացված տոկոսային եկամուտ	31,009	19,262
Տրված փոխառությունների մարումից	17,000	6,000
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(565,939)	(4,044)
Փոխառությունների տրամադրում	-	(25,000)
<b>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>	<b>(136,038)</b>	<b>672,337</b>
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	-	-
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(90,822)	(101,522)
<b>Ֆինանսական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական հոսքեր</b>	<b>(90,822)</b>	<b>(101,522)</b>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(86,332)	750,144
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	315	(740)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	1,172,053	422,649
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ</b>	<b>1,086,036</b>	<b>1,172,053</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 20.03.2020թ.-ին, գրանցման համար 222.120.1122435:

Ընկերության կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2020թ. մարտի 6-ի N 344-Ա հրամանով: «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը, ստեղծվել է ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 24-ի «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» թիվ 1472-Ա որոշման համաձայն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է դրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:


Ընկերության գործունեության նպատակն է «Չափումների միասնականության ապահովման մասին» ու «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված իր իրավասությունների սահմաններում գործառույթների իրականացումը և ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Ընկերությունն իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար զբաղվում է գործունեության հետևյալ հիմնական տեսակներով, այդ թվում՝

- ընդունում և գործողության մեջ է դնում, դադարեցնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտները,
- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը,
- կազմակերպում է ազգային, միջազգային, տարածաշրջանային, միջպետական, ազգային ստանդարտների նախագծերի փորձաքննություն,
- վարում է հաստատված չափման միջոցների և ստանդարտ նմուշների գրանցամատյան,
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման և չափագիտական միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտացման, չափագիտության ազգային շահերից,
- մասնակցում է միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտացման և չափումների միասնականության ապահովմանն ուղղված աշխատանքներին,

- իր իրավասության շրջանակներում ապահովում է ստանդարտացման և չափագիտության միջազգային և տարածաշրջանային այն կազմակերպությունների կանոնների և պարտավորությունների կատարումը, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը,
- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և համակարգում դրանց գործունեությունը,
- ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը,  
կանոնակարգող մարմնի հանձնարարությամբ նախապատրաստում և հրապարակում է տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումն ապահովող ստանդարտների ցանկը.
- հրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների վաճառք,
- կազմակերպում է ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառում կադրերի մասնագիտացում և վերապատրաստում, համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետների համապատասխան ուսուցում և որպես փորձագետներ որակավորում, դրանց արդյունքների հիման վրա նշված բնագավառներում շնորհում է համապատասխան վկայագրեր,
- կազմակերպում ու անցկացնում է դասընթացներ, սեմինարներ և գիտաժողովներ
- իրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների, նորմերի և ուղեցույցների, կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների), ինչպես նաև դրանց փոփոխությունների փորձաքննությունը և հաշվառումը,
- իրականացնում է ազգային ստանդարտների (Հայաստանի Հանրապետությունում կիրառվող միջազգային, միջպետական և տարածաշրջանային) տեղեկատվական համակարգերում ընդհանուր օգտագործման էլեկտրոնաթվային ձևով վարման աշխատանքները,
- իրականացնում է արտադրանքի, ծառայությունների կառավարման համակարգերի, անձանց համապատասխանության պարտադիր և կամավոր հավաստման աշխատանքներ,
- կատարում է արտադրանքի լաբորատոր փորձարկումներ,
- իրականացնում է ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում խորհրդատվական աշխատանքներ, մատուցում է տեղեկատվական ծառայություններ
- իրականացնում է ստանդարտացման, համապատասխանության գնահատման և չափագիտության բնագավառներում տեղեկատվական գրքույկների, տեղեկագրերի, ձեռնարկների, կատալոգների, մասնագիտական այլ գրքերի և տեղեկագրքերի նախապատրաստումը և հրատարակումը,
- իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնում է ստանդարտացման և չափագիտության բնագավառներում պետական քաղաքականություն

- ստեղծում, կատարելագործում, պահպանում և կիրառում է մեծությունների միավորների էտալոնները, ստեղծում է մեծությունների միավորների չափերի փոխանցման համակարգը,



- է չափագիտության բնագավառում գիտական հետազոտություններ,
- իրականացնում է ազգային չափանմուշների (էտալոնների) պահպանումը,
  - իրականացնում է ազգային չափանմուշների (էտալոնների) միջպետական և միջազգային չափանմուշների հետ բաղդատումը, ապահովում է ազգային չափանմուշների հետևելիությունը,
  - իրականացնում է չափման միջոցների և ստանդարտ նմուշների համապատասխանության փորձարկումներ՝ տեսակի հաստատման նպատակով,
  - տալիս է չափման միջոցների ստանդարտ նմուշների տեսակի հաստատման և /կամ/ մերժման մասին եզրակացություն,
  - իրականացնում է չափման միջոցների ստուգաչափում, տրամաչափարկում, եզակի օրինակով արտադրվող և ներմուծվող չափման միջոցների չափագիտական վկայագրում, չափագիտական փորձաքննություն, ստանդարտ նմուշների վկայագրում,
  - կատարում է փորձարկման սարքավորումների և ստենդների վկայագրում չափումների միասնականության ապահովման համակարգում,
  - ստանդարտ նմուշների, չափման միջոցների ստեղծում, նորոգում, արտադրություն և վաճառք,
  - կատարում է չափումների կատարման, ստուգաչափման և տրամաչափարկման մեթոդիկաների մշակում, հաստատում և վկայագրում:

Ընկերության կանոնադրության վերջին փոփոխությունը կատարվել է 2023թ-ի դեկտեմբերի 13-ին՝ համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի N 2540-Ա հրամանի և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2023թ-ի դեկտեմբերի 21-ին: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի պողոտա, 49/4 շենք :

Ընկերության աշխատակիցների տարեկան միջին թվաքանակը 31.12.2025թ.-ին կազմել է 181 մարդ (31.12.2024թ.-ին 185 մարդ):

## 2. Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ծանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից 24 ծանոթագրություն:

### 2.5 Ընկերության կողմից ընդունված նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ընդունվել են ընթացիկ տարում

Հրապարակվել են որոշ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտ(ներ) և մեկնաբանություններ, որոնք պարտադիր չեն 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի հաշվետվությունների պատրաստման համար և վաղաժամ չեն կիրառվել Ընկերության կողմից: Նոր ընդունված հաշվապահական ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցության գնահատումը Ընկերության կողմից ներկայացված է ստորև՝

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	Վարձակալության գծով պարտավորությունը՝ վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքներում (ՖՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2025թ.
ՖՀՄՍ 7, ՀՀՄՍ 7	Մատակարարի ֆինանսական պայմանագրեր (ՖՀՄՍ 7, ՀՀՄՍ 7 փոփոխություններ)	1 հունվարի 2025թ.
ՀՀՄՍ 21	Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություններ)	1 հունվարի 2025թ.
ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 7	Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ: Փոփոխություններ	1 հունվարի 2026թ.

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներում և ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ

ՖՀՄՍ 18	Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը (ՀՀՄՍ 1 փոփոխարինումը ՖՀՄՍ18)	1 հունվարի 2027թ.
---------	---	-------------------

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

### 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

#### 3.1 Արտարժույթ

##### Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Եվրո	449.01	413.89
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Բեժ Բրիտանական ֆունտ	515.6	499.27
Ռուսական ռուբլի	4.87	3.71

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են տարվա շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

#### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար

ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	20-40 տարի
Կառուցվածքներ	20-40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	8-10 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	5-8 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

**3.3 Վարձակալված ակտիվներ**

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն՝ պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

### 3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	10 տարի
Լիցենզիաներ	10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	- 10 տարի

### 3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային գեղջերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը, որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

### 3.6 Ֆինանսական գործիքներ

#### Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:  
Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.
- Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում:

#### *Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

#### *Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով*

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում՝ բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված

Ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ (Փուլ 1) և
- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ (Փուլ 2):
- Ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ (Փուլ 3):

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները, մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

*Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ*

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

**Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը**  
Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

### 3.7 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

### 3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ

պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

### 3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

### 3.10 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Ընկերության կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «Ժամանակի կոնկրետ պահին», թե «Ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Ընկերությունը ընդունել է ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը՝ օգտագործելով կոմույատիվ (աճողական) ազդեցության մեթոդը (առանց գործնական օգուտ ունենալու մտադրության)՝ սկզբնական ընդունման պահին կիրառելով սկզբնական ընդունումից առաջացող ազդեցությունները (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ից): Համապատասխանաբար 2017թ. համադրելի ֆինանսական տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Այսինքն՝ այն ներկայացված է ինչպես նախորդ տարի ներկայացվել է՝ ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտների և մեկնաբանություններին համապատասխան: Համապատասխանաբար ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտով պահանջվող բացահայտումները, ինչպես ընդունված է, չեն կիրառվում համադրելի տեղեկատվության վրա:

Ընկերության հասույթի ճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես ծանոթագրություն 4:

#### 4. Հասույթ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	1,322,682	1,155,246
	<b>1,322,682</b>	<b>1,155,246</b>

#### 5. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի ինքնարժեք	1,380,712	754,249
	<b>1,380,712</b>	<b>754,249</b>

#### 6. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխհատուցումներ աշխատակիցներին	235,034	229,670
Հիմնական միջոցների և ոչ նյութական ասկտիվների մաշվածության գծով ծախսեր	33,947	33,190
Պահպանության ծախսեր	5,817	5,627
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	19,030	4,823
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	3,290	3,521
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	26,598	26,096
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,800	-
Բանկային ծառայություններ ծախսեր, ապահովագրական ծախսեր	407	232
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	12,133	13,270
Վարչական այլ ծախսեր	20,968	44,598
	<b>359,024</b>	<b>361,027</b>

## 7. Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Խոտանված արտադրանքի հետ կապված ծախսեր	595	2,491
Չօգտագործած արձակուրդի պահուստ	32,521	-
Գործառնական այլ	1,245	886
	<b>34,361</b>	<b>3,377</b>

## 8. Այլ եկամուտներ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական վարձակալությունից եկամուտ	7,913	16,094
Մուտքավճար ԱԳԿ	2,032	2,066
Այլ եկամուտ	1,454	5,883
	<b>11,399</b>	<b>24,043</b>

## 9. Ֆինանսական եկամուտ և ծախս

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ	41,265	19,261
Տոկոսային եկամուտ տրված փոխառություններից	417	1,042
Ֆին վարձակալության գծով տոկոսային ծախսեր	(10,257)	-
	<b>31,425</b>	<b>20,303</b>

## 10. Այլ ոչ գործառնական շահույթ/վնաս

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	-	83
Ներդրումային գույքի վերաչափումից կորուստներ	(6,420)	-
Շնոհներից և անհատույց ստացումներից զուտ եկամուտ (ծախս)	664,308	103,485
Արտարժույթի փոխարժեքի տարբերությունից զուտ եկամուտ (ծախս)	289	(846)
	<b>658,177</b>	<b>102,722</b>

**11. Շահութահարկի գծով ծախս**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(55,143)	(39,873)
Հետաձգված հարկ	5,854	-
	<b>49,289</b>	<b>(39,873)</b>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	249,586	-	183,661	-
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (Չհարկվող եկամուտ) /չնվազեցվող ծախսեր, զուտ	44,925	18	33,059	18.00
	4,364	1,7	6,814	3,7
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	49,289	19,7	39,873	21,7

## 12. Հիմնական միջոցներ

Հազար դրամ Սկզբնական արժեք	Շենքեր, շինություն	Կառուցվածքն եր	Մեքենա սարքավորո ւմներ	Տրանսպոր տային միջոցներ	Արտադրա կան, տնտեսակ ան գույք	Հողամաս եր	Այլ հիմնակ ան միջոցն եր	Ընդամենը
<b>2024թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>400,043</b>	<b>6,912</b>	<b>1,619,925</b>	<b>90,958</b>	<b>100,145</b>	<b>92,273</b>	<b>117,574</b>	<b>2,427,830</b>
Ավելացում	-	-	51,725	-	104	-	-	51,829
Ներքին շարժ Դուրսգրում	-	-	-	-	-	-	(2)	(2)
Նվազեցումներ	-	-	-	-	-	-	-	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>400,043</b>	<b>6,912</b>	<b>1,671,650</b>	<b>90,958</b>	<b>100,249</b>	<b>92,273</b>	<b>117,572</b>	<b>2,479,657</b>
Ավելացում	5,998	-	369,223	256,015	2,929	-	-	634,165
Ներքին շարժ Կապիտալացում Դուրսգրում	-	89,581	-	-	-	-	(89,581)	-
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>406,041</b>	<b>96,493</b>	<b>2,040,873</b>	<b>346,973</b>	<b>103,178</b>	<b>92,273</b>	<b>27,991</b>	<b>3,113,822</b>
Կուտակված մաշվածություն								
<b>2024թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>55,908</b>	<b>3,221</b>	<b>933,438</b>	<b>74,204</b>	<b>91,113</b>	-	<b>23,331</b>	<b>1,181,215</b>
Տարվա ծախս Դուրսգրում	17,127	346	113,022	2,376	4,662	-	949	138,482
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>73,035</b>	<b>3,567</b>	<b>1,046,460</b>	<b>76,580</b>	<b>95,775</b>	-	<b>24,280</b>	<b>1,319,697</b>
Տարվա ծախս Դուրսգրում	23,571	2,673	408,022	259,291	4,555	-	900	699,012
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>96,606</b>	<b>6,240</b>	<b>1,454,482</b>	<b>335,871</b>	<b>100,330</b>	-	<b>25,180</b>	<b>2,018,709</b>
Հաշվեկշռային արժեք								
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>327,008</b>	<b>3,345</b>	<b>625,190</b>	<b>14,378</b>	<b>4,474</b>	<b>92,273</b>	<b>93,292</b>	<b>1,159,960</b>
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>309,435</b>	<b>90,253</b>	<b>586,391</b>	<b>11,102</b>	<b>2,848</b>	<b>92,273</b>	<b>2,811</b>	<b>1,095,113</b>

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունում 1,364,270 հազար դրամ (2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 721,309 հազար դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են գրոյական հաշվեկշռային արժեքով:

### 13. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համա- կարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2023 դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,537	37,741	47,278
Ավելացում	-	-	-
Վերազնահատում	-	-	-
Դուրսգրում	-	-	-
2024 դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,537	37,741	47,278
Ավելացում	-	-	-
Դուրսգրում	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,537	37,741	47,278
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	970	4,941	5,911
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	974	-	974
Դուրսգրում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,944	4,941	6,885
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	831	3,271	4,102
Դուրսգրում	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,775	8,212	10,987
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,593	32,800	40,393
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,762	29,529	36,291

### 14. Պաշարներ

Հազար դրամ	2025թ. եկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և կյութեր	26,515	19,058
	<b>26,515</b>	<b>19,058</b>

Պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

### 15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	90,890	72,141
Տրված կանխավճարներ	5,185	35,431
Կանխավճարներ հարկերի գծով	33	-
	<b>96,108</b>	<b>107,572</b>

### 16. Տրված փոխառություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Երկրագործության գիտական կենտրոն ՓԲԸ	25,000	25,000
Գյումրիի սելեկցիոն Կայան ՓԲԸ	7,000	24,000
	<b>32,000</b>	<b>49,000</b>

Փոխառությունները ենթակա են մարման 2026թ-ին:

### 17. Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	-
Բանկային հաշիվներ	1,086,036	1,172,053
	<b>1,086,036</b>	<b>1,172,053</b>

### 18. Սեփական կապիտալ

#### 18.1 Կանոնադրական կապիտալ

Սեփական կապիտալը ձևավորված է կուտակված շահույթից՝ ներառյալ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) ֆինանսական արդյունքը, գլխավոր և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստներից, էմիսիոն եկամտից և կանոնադրական կապիտալից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 244,749 հազար դրամ, որը բաժանված է 81,583 հատ բաժնեմասերի, յուրաքանչյուրը 3,000 դրամ անվանական արժեքով: Ընկերության կանոնադրական կապիտալը ամբողջությամբ վճարված է և պատկանում է Հայաստանի Հանրապետությանը: ՀՀ սեփականություն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը:

#### 18.2 Ըահարաժիններ

2025 թվականին ընկերությունը վճարել է 90,822,400 դրամ շահարաժին:

### 19. Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեակզրի մնացորդ	-	-
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում	5,854	-
Տարեվերջի մնացորդ	5,854	-

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթի կամ վնասի մասին հաշվետ- վությունում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Չօգտագործված արձակուրդային պահուստ	-	-	5,854	5,854
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	-	-	-
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Հիմնական միջոցներ	-	-	-	-
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	-	-	5,854	5,854

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Այլ համա- պարփակ ֆինան-սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթի կամ վնասի մասին հաշվետ- վությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Չօգտագործված արձակուրդային պահուստ	-	-	-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	-	-	-
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				

**Հիմնական միջոցներ**

Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	-	-
Ներառյալ՝	2025թ.	2024թ.
Մարման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում	-	-
Մարման ենթակա 12 ամսվա ընթացքում	5,854	-

**20. Ակտիվներին վերաբերող շնորհներ**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,372,624	1,766,878
	<b>1,372,624</b>	<b>1,766,878</b>

**21. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	97,416	19,628
Հաճախորդներից կանխավճարներ	33,360	21,122
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	3,739	2,355
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	29,141	35,786
Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց. ապ. գծով	-	2,771
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-
	<b>163,656</b>	<b>81,662</b>

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

**22. Պահուստներ**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Պահուստներ շարունակական գործառնական ծախսումների գծով	32,522	-	-	-
Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադար- ձում	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	-	32,522	-	32,522
Երաշխիքային վաճառքների գծով ընթացիկ պահուստներ	-	-	-	-
	-	32,522	-	32,522

Հազար դրամ

2023թ.  
դեկտեմբերի 31-  
ի դրությամբ

Ավելացում

Հակադար-  
ձում

2024թ.  
դեկտեմբերի  
31-ի  
դրությամբ

Չօգտագործված արձակուրդային պահուստ  
Երաշխիքային վաճառքների գծով  
ընթացիկ պահուստներ

-

-

-

### 23. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

#### 23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական ժամանակահատվածում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

### 24. Ֆինանսական գործիքներ

#### 24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

#### 24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

#### Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ

2025թ.  
դեկտեմբերի  
31-ի դրությամբ

2024թ.  
դեկտեմբերի  
31-ի դրությամբ

Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող.

- Տրամադրված փոխառություններ

32,000

49,000

- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

96,108

107,572

- Դրամական միջոցներ և համարժեքներ

1,086,036

1,172,053

1,214,144

1,328,625

#### Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ

2025թ.  
դեկտեմբերի  
31-ի  
դրությամբ

2024թ.  
դեկտեմբերի  
31-ի  
դրությամբ

**Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝  
չահույթի կամ վնասի միջոցով**

- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	163,656	79,307
- Վարկեր և փոխառություններ	-	-
	<b>163,656</b>	<b>79,307</b>

**25. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ**

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

**25.1 Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

*Արտարժույթային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են Եվրոյով, ԱՄՆ դոլարով և Ռուսական ռուբլիով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարները արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու տարվա վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված	ԱՄՆ դոլար	Ֆուևստ	Եվրո	Ռուսական ռուբլի	Ընդամենը
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Տրամադրված փոխառություններ	-	-	-	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-	-	-
Գրամական միջոցներ և համարժեքներ	2,093	12	26	1,812	3,943
	<b>2,093</b>	<b>12</b>	<b>26</b>	<b>1,812</b>	<b>3,943</b>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	-
<b>Զուտ արդյունք</b>	<b>2,093</b>	<b>12</b>	<b>26</b>	<b>1,812</b>	<b>3,943</b>

Հոդված	ԱՄՆ դոլար	Ֆուևտ	Եվրո	Ռուսական ռուբլի	Ընդամենը
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
<b>Ֆինանսական ակտիվներ</b>					
<b>Տրամադրված փոխառություններ</b>					
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր					
Գրանական միջոցներ և համարժեքներ	2,086	-	691	1,380	4,157
	<b>2,086</b>	<b>-</b>	<b>691</b>	<b>1,380</b>	<b>4,157</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>					
<b>Վարկեր և փոխառություններ</b>					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	-
<b>Զուտ արդյունք</b>	<b>2,086</b>	<b>-</b>	<b>691</b>	<b>1,380</b>	<b>4,157</b>

**բ) Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն:

Ընկերությունում հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

**գ) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկդում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

**25.2 Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված բաժնետիրական կապիտալը, կուտակված շահույթը և կապիտալի այլ տարրերը, որոնք բացահայտված են ծանոթագրություն 18-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա) հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	1,372,624	1,766,878
Համաժողովրդական միջոցներ և համարժեքներ	1,086,036	1,172,053
Զուտ պարտավորություն	286,588	594,825
Ընդհանուր կապիտալ	798,674	689,200
<b>Ֆինանսական լծակ</b>	<b>36%</b>	<b>86%</b>

**26. Պարտավորվածություններ**

**26.1 Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ**

Ընկերությունը կապակցված կողմերի հետ կապիտալ ծախսումների գծով պարտավորվածություններ չունի:

**26.2 Իրավական պարտավորվածություններ**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա են Ընկերության հանդեպ ներկայացված դատական հայցեր, որոնք գտնվում են դատաքննության փուլում: Ղեկավարությունը չի կարող հստակ հաշվարկել դատական գործերի արդյունքում հնարավոր պարտավորվածության գումարը՝ ելնելով դատական գործերի բնույթից, առանձնահատկություններից:

2025 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկերության հայցերի հիման վրա հարուցվել են թվով 17 դատական գործեր՝ գումարի բռնագանձման պահանջով: 16 գործի քննությունն ավարտվել է հայցապահանջի բավարարմամբ, որից 3 գործով գումարները վճարվել են, իսկ մնացած 13 գործով վճիռներն ի կատարման են հանձնվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 դատական գործի քննությունը շարունակվում է առաջին աստիճանի դատարանում, որտեղ քննությունը կարող է ավարտվել 2026 թվականի ընթացքում:

**27. Պայմանականություններ**

**27.1 Գործարար միջավայր**

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները՝ ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ գույակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը: Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարումակությունը, խաթարված հեղինակությունը, վաճառքների, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված ռիսկայնությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև

Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Դեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա տարածաշրջանային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

## 27.2 Ապահովագրություն

**Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում:** Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն:

## 27.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

## 27.4 Երջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Երջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Դեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կտտավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## 28. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերությունը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը: ՀՀ սեփականությունն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը:

**28.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաբաժնի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Հազար դրամ	Մնացորդ առ 2024թ. դեկտեմբերի 31-ին		Մնացորդ առ 2025թ. դեկտեմբերի 31-ին	
	Ավելացում	Նվազում	Ավելացում	Նվազում
Տրված փոխառություն	-	-	-	-
Ստացված փոխառություններ	-	-	-	-
	-	-	-	-

**28.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ**

Հիմնական ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	269,320	256,273
	<b>269,320</b>	<b>256,273</b>